Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-06-2024 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ 1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00548
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2005-11-21
1.5 ՀՎՀՀ-ն		02580459
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10547512
		+(374)55588049
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		r2e2.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@r2e2.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կարեն Ասատրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	22	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Էներգաարդյունավետության ծրագիր	17,212,204
	Էներգախնայողության ծրագիր	356,274,402
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Էներգախնայողության ծրագիր	154,135,665
	Արևային լողացող ֆոտովոլտային կայանների զարգացման ծրագիր	0
	Խորհրդատվական ծառայություն	36,894,951

	Նախապատրաստման աջակցության ծրագիր	0
	Մեծաթիվ բնակչությանն ուղղված էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մեծ ազդեցությամբ ցուցադրականփորձարարական միջոցառումների (GIZ) ծրագիր	5,762,111
	Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ-ում էներգախնայողության ծրագիր	486,645,208
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Պաշարներ (հումք, նյութեր)	178,448
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Էներգաարդյունավետության ծրագիր	114,326,893	
Արևային լողացող ֆոտովոլտային կայանների զարգացման ծրագիր	5,846,794	
Նախապատրաստման աջակցության ծրագիր	9,213,833	
Մեծաթիվ բնակչությանն ուղղված էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մեծ ազդեցությամբ ցուցադրականփորձարարական միջոցառումների (GIZ) ծրագիր	4,714,833	
Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ-ում էներգախնայողության ծրագիր	1,171,188,776	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,720,502,307	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,305,291,129	

Նշումներ՝

Նախապատրաստման աջակցության ծրագիրը Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (Հիմնադրամ) կողմից իրականացվող «Նախապատրաստման աջակցություն հավատարմագրման պոտենցիալ թեկնածու կազմակերպության կարիքների գնահատման, կարողությունների հզորացման և ծրագրերի փաթեթի մշակման համար» դրամաշնորհային ծրագիր է, որն ունի 2 բաղադրիչ 1 Հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում, 2 Հիմնադրամի ֆիդուցիար ստանդարտների համապատասխանեցման նպատակով միջոցառումների իրականացում:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____47____էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by
HAYRAPETYAN LIANA

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2023թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 5

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 7

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

Crowe

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի
Հոգաբարձուներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Crowe

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու , և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության

անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր:Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատու Ալբերտ Ասատրյանն է:

22 մայիսի 2024թ.

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
առաջադրանքի ղեկավար

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Տիգրան Ավինյան

Հոգաբարձուների խորհրդի նախագահ, Երևանի քաղաքապետ

Հակոբ Վարդանյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

Գարեգին Թաղրամյան

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ

Միխայիլ Մարտիրոսյան

Հայաստանի էներգետիկ սեկտորի զարգացմանն աջակցող «Հայաստանի էներգետիկ ծառայություններ մատուցող ձեռնարկությունների ասոցիացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Աստղինե Պասոյան

«Էներգախնայողության աջակցության» հիմնադրամի տնօրեն

Դավիթ Գրիգորյան

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ

Արամ Մեյմարյան

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Աշոտ Պետրոսյան

ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական համակարգի զարգացման կենտրոնի ղեկավար, Ֆինանսական համակարգի կայունության և կարգավորման դեպարտամենտ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ շնորհներից	4	111,036	61,278
Տոկոսային եկամուտ	5	104,799	52,993
Ծառայությունների մատուցումից եկամուտ	6	119,395	88,370
Այլ եկամուտ		10,492	17,404
		345,722	220,045
Ծրագրերի իրականացման ծախսեր	7	(126,582)	(85,271)
Վարչական ծախսեր	8	(189,163)	(212,813)
Պահուստներ		2,644	(323)
Այլ ծախսեր		(15,129)	-
Գործառնական գործունեության արդյունք		17,492	(78,361)
Ֆինանսական եկամուտ	5	61,781	79,887
Ֆինանսական ծախսեր	9	(23,923)	(28,707)
Այլ ֆինանսական հոդվածներ	10	(44,800)	248,661
Տարվա արդյունք մինչև հարկերը		10,550	221,480
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	11	7,130	-
Տարվա արդյունք		17,680	221,480
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		17,680	221,480

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. մայիսի 22-ին

Կարեն Ասատրյան
Տնօրեն

Գայանե Բարխանաջյան
Ֆինանսական ղեկավար

Շահույթ կամ վնասի հաշվետվությունը պետք է դիտարկվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը [illegible] 1-ից մինչև 43-ը [illegible] բերված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	4,699	1,733
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	13	17,212	25,819
Ոչ նյութական ակտիվներ	12	472	33
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	377,037	679,474
Հետաձգված հարկային ակտիվ	15	7,786	-
Տրված փոխառություններ	16	1,702,116	889,207
		2,109,322	1,596,266
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	17	130,402	125,818
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	467,274	583,594
Տրված փոխառություններ	16	575,013	494,627
Դեպոզիտներ	18	498,358	973,092
Դրամական միջոցներ և համարժեքներ	19	157,136	273,602
		1,828,183	2,450,734
Ընդամենը ակտիվներ		3,937,505	4,047,000
Հիմնադրին վերագրելի զուտ արդյունք		303,438	285,758
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	20	8,611	20,403
Հետաձգված եկամուտ	21	122,267	123,821
Ստացված փոխառություններ	22	3,013,788	3,034,282
		3,144,666	3,178,506
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	20	11,161	9,939
Ստացված փոխառություններ	22	77,591	85,036
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	11,831	18,047
Հետաձգված եկամուտ	21	373,696	451,976
Պահուստներ	24	15,122	17,739
		489,401	582,737
Ընդամենը պարտավորություններ		3,634,067	3,761,243
		3,937,505	4,047,000

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	9,853	221,479
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	10,909	11,724
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)		-
Տոկոսային ծախսեր	25,878	28,707
Տոկոսային եկամուտ փոխառություններից	(104,799)	(52,993)
Տոկոսային եկամուտ ժամկետային ավանդներից	(48,655)	(79,887)
Եկամուտ շնորհներից	(111,036)	(61,278)
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի փոփոխություն	1,318	323
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	(2,617)	1,809
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	44,799	(248,661)
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(174,350)	(178,777)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	432,119	429,473
Պաշարների փոփոխություն	(4,457)	(110,987)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(6,225)	(33,438)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	247,087	106,272
Վճարված տոկոսներ	(23,257)	(25,084)
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(23,257)	81,188
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(5,707)	(1,989)
Ժամկետային ավանդների մարում/(ներդրում), զուտ	477,361	(140,313)
Ստացված շնորհներ և շնորհների հետ վերադարձ, զուտ	21,861	258,711
Ստացված տոկոսներ	144,647	115,551
Փոխառությունների տրամադրում, զուտ	(895,626)	(239,127)
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(257,464)	(7,167)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառությունների մարում	(73,718)	(76,999)
Վարձակալության գծով պարտավորության մարում	(13,332)	(13,332)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(87,050)	(90,331)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(120,684)	(16,310)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	4,218	(20,274)
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	273,602	310,186
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	157,136	273,602

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը հիմնվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (Կառավարություն) 2005թ. ապրիլի 28-ի թիվ 799 որոշմամբ: Հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է (Հիմնադիր): Հիմնադրամի նպատակներն են.

- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների իրականացմանը նպաստելը,
- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանի շուկայի զարգացմանը խթանելը,
- շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազմանը նպաստելը,
- էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համապատասխան լիազորություններ տրամադրվելու դեպքում պետության հետ կնքվող գործակալության պայմանագրի հիման վրա պետության անունից ոլորտի զարգացմանը խթանող վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման կազմակերպումը:

2023թ.-ին Հիմնադրամն իրականացրել է հետևյալ ծրագրերը.

- Հիմնադրամը շրջանառու ֆոնդի միջոցներով իրականացնում է Էներգաարդյունավետության ծրագիր, որը հնարավորություն է ստեղծում իրականացնել էներգախնայողության միջոցառումներ և վերականգնվող էներգիայի սարքավորումների ֆինանսավորում գործընկեր ֆինանսական կառույցների և ուղղակի ներդրումների միջոցով:

  Ուղղակի ներդրումների դեպքում Հիմնադրամը իրականացնում է հանրային օբյեկտների Էներգախնայող միջոցառումներ և վճարում կապալառուներին՝ հետաձգված վճարումով հետ ստանալով շրջանառու միջոցները շահառուներից: Շահառուներ են հանդիսանում հանրային շենքերի սեփականատերը: Շահառուների հետ կնքվում են էներգետին ծառայության պայմանագրեր:

  Ֆինանսական կառույցների միջոցով ներդրումները իրականացվում են ՀՀ ում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում՝ վերաֆինանսավորման սկզբունքով: Ֆինանսական կառույցների հետ կնքվում են փոխառության պայմանագրեր ֆինանսավորման որոշակի սահմանաչափերով: Այս սխեմայով ֆինանսավորվում է իրականացվում համայնքային ծրագրերին: Շրջանառու միջոցների վերադարձը Հիմնադրամին իրականացնում են ֆինանսական կառույցները: Շահառուներ են հանդիսանում համայնքապետարանները, ՀՀ չգազաֆիկացված, սահմանամերձ և գազաֆիկացված համայնքների բնակիչները, գործող կազմակերպությունները:

2023 թվականի ընթացքում Հիմադրամի կողմից ֆինանսական կազմակերպություններին տրամադրվել է 1,278 մլն ՀՀ դրամի փոխառություն:

- Կանաչ կլիմայի հիմնադրամին (ԿԿՀ) հավատարմագրվելու նպատակով Հիմնադրամը 2020թ.ին ստացել է դրամաշնորհ՝ բարելավելու Հիմնադրամի Գործառնական ձեռնարկը, ինչպես նաև մշակելու երկու ծրագրերի համառոտագրեր ԿԿՀ-ի ֆինանսավորմանը ներկայացնելու նպատակով: Ծրագրի արժեքն է 254,000 ԱՄՆ դոլար:
  Հավատարմագրումից հետո Հիմնադրամը կկարողանա իրականացնել մինչև 50 մլն. ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ ծրագրեր, ինչպես նաև տրամադրել ենթադրամաշնորհներ:

- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և Ֆրանսիական Տրանսէներգիա (TRANSENERGIE) կազմակերպության համագործակցությամբ մշակվել է Հայաստանում լողացող արևային կայանների զարգացման ծրագիրը, որի արդյունքում 800,000 եվրո դրամաշնորհը հավանության է արժանացել Ֆրանսիայի կառավարության կողմից: Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի փետրվարի 25-ին: Մշակվել է Հայաստանի տարածքում գտնվող բոլոր լճերի և արհեստական ջրամբարների ցուցակը՝ իրենց հիմնական բնութագրական տվյալներով:
  Հիմնադրամի և Տրանսէներգիա ընկերության հետ համատեղ քննարկումների արդյունքում ընտրվել են հետևյալ ջրամբարները՝ Ազատի ջրամբար (Արարատի մարզ), Ապարանի ջրամբար (Արագածոտնի մարզ) և Երևանյան ջրամբար (Երևան):
  Հիմնվելով այդ տեխնիկատնտեսական հիմնավորումների վրա՝ ծրագրի իրականացման համար որպես նպատակահարմար ջրամբար ընտրվել է Երևանյան լիճը: Ջրամբարում կառուցվել է 151 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ՖՎ կայանը, որը էլեկտրական արտադրության լիցենզիան ստանալուց հետո միացվելու է էլեկտրական բաշխիչ ցանցին:

- 2022 թվականի մայիսին մեկնարկել է «Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. Հանրային շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների գործարկում և աջակցություն «կանաչ էներգիայի» զարգացման ծրագիրը: Ծրագրի արժեքն է 2,071,277 (դրամաշնորհ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամից՝ 1,719,200 մլն. ԱՄՆ դոլար, համաֆինանսավորում ՀՀ կառավարությունից՝ 352,077 ԱՄՆ դոլար):

  Ծրագրի նպատակն է Հանրային նշանակության 15 շենքերում (դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց) իրականացնել էներգախնայողության միջոցառումներ, ինչը կհանգեցնի տարեկան 3.000 ՄՎտժ էլեկտրաէներգիայի խնայողության և տարեկան 700 տոննա ածխաթթու գազի արտանետման ցուցանիշի նվազեցման:

2022թ. ընթացքում իրականացվել է ընդամենը 6,225,827 ՀՀ դրամի վճարում, որից դրամաշնորհի միջոցների հաշվին՝ 5,052,238 ՀՀ դրամ և ՀՀ կառավարության համաֆինասավորման միջոցներից 1,173,589 ՀՀ դրամ:2023թ.ի ընթացքում իրականացվել է 113,334,966 ՀՀ դրամի աշխատանքներ: Ծրագրի ավարտը նախատեսվում է 2024թ.ի վերջ:

- 2023 թվականի օգոստոսին մեկնարկել է «Մեծաթիվ բնակչությանն ուղղված էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի բարձր ազդեցությամբ ցուցադրական-փորձարարական» ծրագը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Լոռու, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի մի շարք համայնքներում Ծրագրի շահառուներն են 18 հանրային շենքեր, որոնց վրա կտեղադրվի 20-25 կՎտ հզորությամբ 17 ֆոտովոլտային կայան և կիրականացվի մեկ էներգախնայողության միջոցառում: Ծրագրի արժեքն է շուրջ 585 000 եվրո:Ծրագիրը ավարտը նախատեսվում է 2024թ.ի նոյեմբեր:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մելիք Ադամյան փ, 1:

Հիմնադրամրի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը, պետական գրանցման համար՝ 222.160.00548:

Հիմնադրամրի աշխատակիցների միջին թվաքանակը 31.12.2023թ. դրությամբ կազմել է 22 մարդ (2022թ.՝ 21 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերությունններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:*

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել

օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում:

2.5 Նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտնում ընթացիկ տարվա համար

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը թողարկվել է, բայց դեռ ուժի մեջ չի մտել:

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
ՖՀՄՍ 17. *«Ապահովագրության պայմանագրեր»*	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «*Շահութահարկեր*»՝ Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «*Շահութահարկեր*»՝ Միջազգային հարկային բարեփոխումներ. Սյուն երկու մոդելի կանոններ	23 Մայիսի, 2023թ.	Ընդունված
Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»*՝ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում	1 Հունվարի, 2023թ.	Ընդունված

ՖՀՍՍ 17. «Ապահովագրության պայմանագրեր»

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՖՀՍՍ 17-ը և հարակից փոփոխությունները: ՖՀՍՍ 17-ը սահմանում է ապահովագրական պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և փոխարինում է ՖՀՍՍ 4 Ապահովագրության Պայմանագրեր ստանդարտին:

ՖՀՍՍ 17-ը տալիս է ընդհանուր մոդել (որը փոփոխված է ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար), որը նկարագրված է որպես փոփոխական վճարի մոտեցում: Ընդհանուր մոդելը պարզեցվում է, եթե որոշակի չափանիշները բավարարվում են՝ չափելով մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը՝ կիրառելով ապահովագրական վճարների բաշխման մոտեցումը:

Ընդհանուր մոդելը օգտագործում է ընթացիկ ենթադրություններ ապագա դրամական միջոցների հոսքերի գումարը, ժամկետները և անորոշությունը գնահատելու համար, և այն հստակորեն չափում է այդ անորոշության արժեքը: Այն հաշվի է առնում շուկայական տոկոսադրույքները և ապահովադիրների օպցիոնների ու երաշխավորությունների ազդեցությունը:

Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՖՀՍՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՀՀՍՍ 1-ի փոփոխությունները: Փոփոխությունները փոխում են ՀՀՍՍ 1-ի պահանջները՝ կապված հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման հետ: Փոփոխությունները փոխարինում են ,նշանակալի հաշվապահական հաշվառման քաղաքականություն տերմինի բոլոր կիրառումները ,հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվություն տերմինով: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը էական է, եթե, երբ դիտարկվում է կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ տեղեկատվության հետ միասին, ողջամտորեն ակնկալվում է, որ այն կազդի ընդհանուր նպատակի ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողների կողմից այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացված որոշումների վրա:

ՀՀՍՍ 1-ի օժանդակ պարագրաֆները նույնպես փոփոխվել են՝ պարզաբանելու համար, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը, որը վերաբերում է ոչ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին, էական չէ և բացահայտման կարիք չունի: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը կարող է էական լինել պայմանավորված գործարքների, այլ իրադարձությունների կամ պայմանների բնույթով, նույնիսկ եթե գումարները էական չեն: Այնուամենայնիվ, հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին վերաբերող ոչ բոլոր տեղեկություններն են ինքնին էական:

ՀՀՄՍԽ-ն նաև մշակել է ուղեցույցներ և օրինակներ՝ ՖՀՍՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2-ում նկարագրված «չորս քայլ էականության գործընթացի» կիրառումը բացատրելու և ցուցադրելու համար:

Փոփոխություններ ՀՀՍՍ 12-ում. «Շահութահարկեր»՝ Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՀՀՍՍ 12-ի փոփոխությունները: Փոփոխությունները նախատեսում են ևս մեկ բացառություն սկզբնական ճանաչման ազատումից: Ըստ փոփոխությունների, կազմակերպությունը չի կիրառում սկզբնական ճանաչումից ազատումը այն գործարքների համար, որոնք առաջացնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Կախված կիրառելի հարկային օրենսդրությունից, հարկվող և նվազեցվող հավասար ժամանակավոր տարբերություններ կարող են առաջանալ ակտիվի և պարտավորության սկզբնական ճանաչման ժամանակ մի գործարքում, որը բիզնեսի միավորում չէ և չի ազդում ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա: Օրինակ, դա կարող է առաջանալ վարձակալության գծով պարտավորության և համապատասխան օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչման ժամանակ՝ կիրառելով ՖՀՍՍ 16-ը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ:

ՀՀՍՍ 12-ի փոփոխություններից հետո կազմակերպությունից պահանջվում է ճանաչել համապատասխան հետաձգված հարկային ակտիվը և պարտավորությունը, ընդ որում ցանկացած հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը ենթակա է ՀՀՍՍ 12-ի փոխհատուցելիության չափանիշներին:

Փոփոխություններ ՀՀՍՍ 12-ում. «Շահութահարկեր»՝ Միջազգային հարկային բարեփոխումներ. Սյուն երկու մոդելի կանոններ

Ընկերությունը ընթացիկ տարում առաջին անգամ ընդունել է ՀՀՍՍ 12-ի փոփոխությունները: ՖՀՍՍ Խորհուրդը փոխում է ՀՀՍՍ 12-ի շրջանակը՝ պազաբանելու համար, որ ստանդարտը կիրառելի է շահութահարկի համար, որը բխում է հարկային օերնսդրությյունից, որն ընդունվել կամ ըստ էության ընդունվել է ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված Սյուն երկու մոդելի կանոնների իրականացման համար, ներառյալ հարկային օրենսդրությունը, որը կիրառում է այդ կանոններում նկարագրված որակավորված նվազագույն տեղական լրացուցիչ հարկերը:

Փոփոխությունները ժամանակավոր բացառություն են մտցնում ՀՀՍՍ 12-ի հետաձգված հարկերի հաշվառման պահանջների մեջ, այնպես որ կազմակերպությունը կարող է չճանաչել և չբացահայտել Սյուն երկու շահութահարկի հետ կապված հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մասին տեղեկատվությունը:

Փոփոխություններ ՀՀՍՍ 8-ում. «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»՝ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում

Փոփոխությունները փոխարինում են հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխության սահմանումը հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանմամբ: Ըստ նոր սահմանման, հաշվապահական հաշվառման գնահատումները, ֆինանսական հաշվետվություններում ներկայացված դրամական գումարներ են, որոնք ենթակա են չափման անորոշությաների:

Նոր և վերանայված ՖՀՍՍ ստանդարտներ, որոնք հրապարակված են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՍՍ ստանդարտները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն.

ՖՀՍՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Փոփոխություններ ՖՀՍՍ 10-ում. *«Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»* և ՀՀՍՍ 28. *«Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում»* - Ներդրողի և նրա	Դեռևս չի սահմանվել ՖՀՍՍ Խորհրդի կողմից	-

ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում		
Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝* Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի	1 Հունվարի, 2024թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝* Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ	1 Հունվարի, 2024թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՖՀՍՍ 16-ում. *«Վարձակալություն»՝* վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքներում	1 Հունվարի, 2024թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 7-ում. *«Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» և ՖՀՍՍ 17-ում «Ֆինանսական գործիքներ»՝* մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ	1 Հունվարի, 2024թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՍՍ 21-ում. *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»՝* Փոխանակելիության բացակայություն	1 Հունվարի, 2025թ.	Առաջընթաց

Փոփոխություններ ՖՀՍՍ 10-ում. «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» և ՀՀՍՍ 28. «Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում» - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում

ՖՀՍՍ 10-ի և ՀՀՍՍ 28-ի փոփոխությունները վերաբերում են իրավիճակներին, երբ ներդրողի և նրա ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև կա ակտիվների վաճառք կամ ներդրում: Մասնավորապես, փոփոխությունները նշում են, որ դուստր կազմակերպության նկատմամբ (որը բիզնես չէ) վերահսկողության կորստից առաջացող օգուտները կամ վնասները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության հետ գործարքում, ճանաչվում են մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն այդ ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով: Նմանապես, ցանկացած նախկին դուստր կազմակերպությունում (որը դարձել է ասոցիացված կամ համատեղ ձեռնարկում, որը հաշվառվում է սեփական կապիտալի մեթոդով) պահպանված ներդրումների իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են նախկին մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն նոր ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով:

Փոփոխություններ ՀՀՍՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝ Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի

ՀՀՍՍ 1-ի փոփոխությունները, որոնք հրապարակվել են 2020թ. հունվարին, ազդում են միայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա, և ոչ ակտիվի, պարտավորության, եկամուտի կամ ծախսի ճանաչման գումարի կամ ժամկետի կամ դրանց մասին բացահայտված տեղեկատվության վրա:

Փոփոխությունները պարզաբանում են, որ պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ հիմնված է այն իրավունքների վրա, որոնք գոյություն ունեն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, նշում են, որ դասակարգման վրա չեն

ազդում այն ակնկալիքները, թե արդյոք կազմակերպությունը կկիրառի իր՝ պարտավորության մարումը հետաձգելու իրավունքը, բացատրում են, որ իրավունքները գոյություն ունեն, եթե կովենանտները կատարված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և տալիս են մարման սահմանումը՝ հստակեցնելով, որ մարումը վերաբերում է դրամական միջոցների, բաժնային գործիքների, այլ ակտիվների ծառայությունների փոխանցմանը կոնտրագենտին:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝ Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ

Փոփոխությունները սահմանում են, որ միայն այն կոմենանտներն են ազդում պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով հետաձգելու իրավունքի վրա, որոնց կազմակերպությունը պետք է համապատասխանի հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կամ դրանից առաջ (և, հետևաբար, պետք է հաշվի առնվեն պարտավորության՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման ժամանակ):

ՖՀՄՍ Խորհուրդը նաև սահմանում է, պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով հետաձգելու իրավունքը ազդեցություն չի կրում, եթե կազմակերպությունը պարտավոր է հետևել կովենանտներին միայն հաշվետու ժամանակաշրջանից հետո: Այնուամենայնիվ, եթե կազմակերպության՝ պարտավորությունների մարումը հետաձգելու իրավունքը ենթակա է կազմակերպության կողմից կովենանտների համապատասխանության հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում, կազմակերպությունը բացահայտում է տեղեկատվությունը, որը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն է տալիս հասկանալ հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում մարման ենթակա պարտավորությունների ռիսկը: Սա ներառում է կովենանտների մասին տեղեկատվություն (ներառյալ կովենանտների բնույթը և թե երբ կազմակերպությունը պետք է համապատասխանի դրանց), հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և փաստերն ու հանգամանքները, եթե այդպիսիք կան, որոնք ցույց են տալիս, որ կազմակերպությունը կարող է դժվարություններ ունենալ կովենանտներին համապատասխանելու հարցում:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում. «Վարձակալություն»՝ վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքներում

ՖՀՄՍ 16-ի փոփոխությունները ավելացնում են հետագա չափման պահանջներ վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքների համար, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ որպես վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են վաճառող-վարձակալից որոշել «վարձակալության վճարները» կամ ,վերանայված վարձակալական վճարները այնպես, որ վաճառող-վարձակալը չճանաչի օգուտ կամ վնաս, որը վերաբերում է վաճառող-վարձակալի կողմից պահպանված օգտագործման իրավունքին, մեկնարկի ամսաթվից հետո:

Փոփոխությունները չեն ազդում վաճառող-վարձակալի կողմից ճանաչված շահույթի կամ վնասի վրա՝ կապված վարձակալության մասնակի կամ լրիվ դադարեցման հետ: Առանց այս նոր պահանջների, վաճառող-վարձակալը կարող էր ճանաչել օգուտ իր պահպանած օգտագործման իրավունքից վարձակալության պարտավորության վերաչափման պատճառով (օրինակ՝ վարձակալության փոփոխության կամ վարձակալության ժամկետի փոփոխության հետևանքով)՝ կիրառելով ՖՀՄՍ 16-ի ընդհանուր պահանջները: Սա կարող էր հատկապես լինել հետադարձ վարձակալության դեպքում, որը ներառում է վարձակալության փոփոխական վճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից:

Որպես փոփոխությունների մաս, ՖՀՄՍ Խորհուրդը փոփոխել է ՖՀՄՍ 16-ի ցուցադրական օրինակը և ավելացրել է նոր օրինակ՝ ցուցադրելու օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալության պարտավորության հետագա չափումը վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքում՝ փոփոխական

վարձակալության վճարներով, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից: Ցուցադրական օրինակները նաև պարզաբանում են, որ պարտավորությունը, որն առաջանում է վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքից, որը որակվում է որպես վաճառք ՖՀՄՍ 15-ի կիրառմամբ, վարձակալության գծով պարտավորություն է:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում. «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» և ՖՀՄՍ 17-ում «Ֆինանսական գործիքներ»՝ մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ

Փոփոխությունները լրացնում են ՀՀՄՍ 7-ի բացահայտման նպատակը՝ նշելով, որ կազմակերպությունից պահանջվում է բացահայտել տեղեկատվություն իր մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածությունների մասին, որը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն է տալիս գնահատել այդ պայմանավորվածությունների ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա: Ի լրումն, ՖՀՄՍ 7-ը փոփոխվել է՝ որպես օրինակ ավելացնելով մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածությունները կազմակերպության՝ իրացվելիության ռիսկի կենտրոնացման ենթարկվածության մասին տեղեկատվության բացահայտման պահանջների շրջանակում:

«Մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ» տերմինը սահմանված չէ: Փոխարենը, փոփոխությունները նկարագրում են պայմանավորվածության այնպիսի բնութագրերը, որոնց համար կազմակերպությունից կպահանջվի տրամադրել տեղեկատվությունը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում. «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»՝ Փոխանակելիության բացակայություն

Փոխանակելիության բացակայության վերաբերյալ փոփոխությունները (Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում) փոփոխում են ՀՀՄՍ 21-ը որպեսզի

- հստակեցնի, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի, և երբ՝ ոչ
- հստակցնի, թե ինչպես է կազմակերպությունը որոշում փոխարժեքը, որը պետք է կիրառվի, երբ արժույթը փոխանակելի չէ
- պահանջի լրացուցիչ տեղեկատվության բացահայտում, երբ արժույթը փոխանակելի չէ

Ընկերության ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ և ՖՀՄՍ-ի առաջին անգամ ընդունումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2022թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել Հիմնադրամի կողմից, ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

Արժույթ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.9	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.3 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները *(համակարգչային տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, տնտեսական գույք և այլն)* հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցիօգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	10-20 տարի
Մեքենա և սարքավորումներ	1-8 տարի
Այլ	1-8 տարի

3.4 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

<u>Հիմնադրամը որպես վարձակալ</u>

Հիմնադրամը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Հիմնադրամը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ <u>Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով</u>, որպեսզի վճարի

վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնադրամը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վարաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ զեղչեր: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	8 տարի

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Հիմնադրամին կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեսթ) ենթարկվեն:

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Վարձակալության սկսման պահին, Հիմնադրամը կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը), ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Հիմնադրամը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշվել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հոդվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝ մինչև 10 տարի:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Հիմնադրամի ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Հիմնադրամի բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական

պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

<u>Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող</u>

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

<u>Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)</u>

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

<u>Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)</u>

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

<u>Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող</u>

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉՇՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք

առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Հիմնադրամի կողմից, թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉԾՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉԾՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉԾՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Հիմնադրամը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Կազմակերպությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Կազմակերպությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Կազմակերպությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉԾՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը ընտրել է ԻԱՉԾՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ

վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Կազմակերպությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Կազմակերպությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Կազմակերպությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Կազմակերպությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Կազմակերպությունը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Կազմակերպության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Կազմակերպությունը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Կազմակերպությունը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 21ում:

3.8 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.9 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Երբ Հիմնադրամը մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ և երբ այդ վաճառքի տեղի ունենալը հավանական է 12 ամսվա ընթացքում, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է դասակարգվի և ներկայացվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես վաճառքի համար պահվող ակտիվներ:

Վաճառքի համար պահվող ակտիվները չափվում են ակտիվի՝ մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և «իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից՝ նվազագույնով: Այս ակտիվների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Այնուամենայնիվ, վաճառքի համար պահվող որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը

գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.12 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հիմնադրամի հասույթը ձևավորվում է հիմնականում ստացված նվիրատվություններից, մատուցված ծառայություններից, Հիմնադրամի կողմից տրված փոխառությունների տոկոսներից և այլն:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է ստորև ներկայացված 5 քայլերի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունը
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(երը) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի միջև որևէ պահին, կամ կոնկրետ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Հիմնադրամի հասույթի ճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես ծանոթագրություն 4:

4 Եկամուտ շնորհներից

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներին վերաբերող շնորհներ	110,410	58,617
Ակտիվների վերաբերող շնորհներ	626	2,661
	111,036	61,278

5 Տոկոսային եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական եկամուտ տրված փոխառություններից	104,799	52,993
Ֆինանսական եկամուտ ավանդներից և բանկային հաշիվներց	61,781	79,887
	166,580	132,880

6 Ծառայությունների մատուցումից եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Խորհրդատվական ծառայություններ	31,159	61,518
Էներգետիկ ծառայություններ	88,236	26,853
	119,395	88,370

7 Ծրագրերի իրականացման ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արևային լողացող ֆոտովոլտային կայանների զարգացման ծրագիր	2,048	3,491
Նախապատրաստման աջակցության ծրագիր	9,134	46,927
Էներգախնայողության ծրագիր	78,401	4,851
Աջակցություն ՎԶԵԲ-ի Անցում դեպի կանաչ տեխնոլոգիաներ հարթակի ստեղծմանը Հայաստանում	800	11,055
Հայաստանում էլեկտրական կուտակիչների զարգացման ծրագիր	21,794	3,290
Փորձագիտական ուսումնասիրություն կենսազանգվածի կայանների ֆինանսական և տեխնիկական իրագործելիության համար ծրագիր	-	6,000
ԳԻՋ ծրագիր	4,992	-
Այլ	9,413	9,657
	126,582	85,271

8 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցներին հատուցումներ	153,582	182,583
Մաշվածություն և ամորտիզացիա	974	1,565
Վարձակալության ծախսեր	2,513	8,606
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	10,850	2,222
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3,795	3,924
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	796	1,470
Բանկային և ապահովագրության ծախսեր	4,652	7,273
Այլ	12,001	5,170
	189,163	212,813

9 Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ծախսեր փոխառությունների գծով	23,116	24,849
Ֆինանսական ծախսեր վարձակալության գծով	807	3,858
	23,923	28,707

10 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից եկամուտ		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	39,725	17,389
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	152	795
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	71
- Դեպոզիտներ	8,222	7,623
- Ստացված փոխառություններ	57,981	392,938
	106,088	418,816
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ծախս		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	(35,507)	(37,663)
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(276)	(1,989)
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(17)	(23)
- Դեպոզիտներ	(11,862)	(98,700)
- Ստացված փոխառություններ	(103,226)	(31,779)
	(150,888)	(170,154)
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից զուտ եկամուտ/(ծախս)	(44,800)	248,661

11 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(656)	-
Հետաձգված հարկ	7,786	-
	7,130	-

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՍՍ)	10,550		221,479	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	(1,899)	18%	(39,866)	18%
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	9,029	86%	39,866	18%
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	7,130	104%	-	36%

12 Հիմնական Միջոցներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական և տնտեսական գույք	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	294,696	19,209	29,470	22,455	9,125	374,955
Ավելացում	1,125	-	254	547	62	1,988
Օտարում	-	-	-	-	(605)	(605)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	295,821	19,209	29,724	23,002	8,582	376,338
Ավելացում	-	-	-	4,999	708	5,707
Ներքին տեղաշրժ	3,829	180	-	(4,009)	-	-
Օտարում	-	-	-	-	(62)	(62)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	299,650	19,389	29,724	23,992	9,228	381,983
Կուտակված մաշվածություն և արժեզրկում						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	(294,659)	(19,163)	(29,470)	(19,801)	(8,968)	(372,060)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(947)	(87)	(75)	(1,822)	(187)	(3,118)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	-	606	606
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(295,606)	(19,250)	(29,545)	(21,623)	(8,549)	(374,573)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(1,361)	(29)	(179)	(463)	(269)	(2,301)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	-	62	62
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(296,967)	(19,279)	(29,724)	(22,086)	(8,756)	(376,812)
Հաշվեկշռային արժեք						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	37	46	-	2,654	157	2,895
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	215	(41)	179	1,379	33	1,765
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,683	110	-	1,906	472	5,171

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 341,731 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ ունեն զրո հաշվեկշռային արժեք (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 388,553 հազար դրամ):

13 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքով ակտիվների հաշվեկշռային արժեքը և ժամանակաշրջանի ընթացքում շարժը.

Հազար դրամ	Շենքեր	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք		
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	34,425	34,425
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(8,606)	(8,606)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,819	25,819
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(8,607)	(8,607)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,212	17,212

14 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	377,963	681,744	404,874	559,616
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(926)	(2,270)	(1,387)	(1,964)
Տրված կանխավճարներ	-	-	24,030	4,088
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեից	-	-	1	12,816
Այլ դեբիտորական պարտքեր	-	-	39,756	9,038
	377,037	679,474	467,274	583,594

Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 16-ի թիվ 174-Ն որոշման և 2012թ. Հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված գործակալության պայմանագրի, Հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությունից կառավարման է ստացել դրամական միջոցներ, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորմանն ուղղված ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով: Կառավարման ստացված միջոցները տրամադրվել են Հիմնադրամին տարեկան 0.75%-ով և մինչև 2045թ. մարման ժամկետով: Հիմնադրամին կառավարման հանձնված միջոցները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվել են որպես «Ստացված փոխառություններ», իսկ կառավարման ստացված միջոցների նկատմամբ հաշվեգրված տոկոսային ծախսերը ներկայացված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Ֆինանսական ծախսեր» հոդվածում:

Կառավարման ստացված միջոցների հաշվին, ինչպես նաև, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և ՀՀ կառավարության միջև 2012թ. ապրիլի 20-ին կնքված թիվ TF012163 դրամաշնորհային համաձայնագրով ստացված միջոցների և Եվրասիական Զարգացման Բանկի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 2022թ.ի մարտի 4-ին կնքված դրամաշնորհային համաձայնագրի միջոցների հաշվին Հիմնադրամն իրականացնում է էներգաարդյունավետության/էներգախնայողության ծրագիր: Ծրագրի շրջանակներում Հիմնադրամը հանրային օբյեկտներում կատարում է ներդրումներ Էներգետիկ/էներգախնայողության ծառայությունների մատուցման ձևով:

Էներգախնայողության ծառայությունների մասով Հիմնադրամը ճանաչում է էներգետիկ ծառայությունների գծով դեբիտորական պարտքեր երբ ծառայությունները մատուցված են: Էներգետիկ ծառայություններից եկամուտները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ «Ծառայությունների մատուցումից եկամուտներ» հոդվածում:

Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

15 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	-	-
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 10)	7,786	-
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	-	-
Տարեվերջի մնացորդ	7,786	-

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2023թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-	-	-
Չօգտագործված արձակուրդային պահուստ	-	-	2,722	2,722
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	-	-	5,064	5,064
	-	-	7,786	7,786
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	-	-	7,786	7,786

16 Տրված փոխառություններ

Հազար դրամ	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿԲԱ Բանկ ՓԲԸ	321,228	313,258	93,051	173,765
ԱԳԲԱ Լիզինգ ՎԿ ՓԲԸ	428,927	223,986	166,766	130,521
Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ	153,567	178,282	70,245	115,350
Ագրոլիզինգ ԼՎԿ ՍՊԸ	308,845	74,533	77,644	30,745
Արմենիա Լիզինգ Քամփնի ՈՒՎԿ ՓԲԸ	296,729	37,700	125,093	25,228
Էվոկաբանկ ՓԲԸ	145,309	63,983	32,055	22,231
Ֆասթ Բանկ ՓԲԸ	6,645	7,169	1,370	2,174
Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ	58,225	-	14,653	-
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(17,359)	(9,704)	(5,864)	(5,387)
	1,702,116	889,207	575,013	494,627

17 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	124,826	124,952
Վառելիք	1,519	866
Այլ նյութեր	4,057	-
	130,402	125,818

18 Դեպոզիտներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեպոզիտներ ՀՀ առևտրային բանկերում	500,958	981,918
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(2,600)	(8,826)
	498,358	973,092

19 Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	157,136	273,602
	157,136	273,602

20 Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Ստորև ներկայացված է վարձակալության գծով պարտավորությունները (ներառյալ վարձավճարի գծով պարտավորությունները) և ժամանակաշրջանի ընթացքում փոփոխությունները

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական մնացորդ	30,342	39,815
Ավելացում	-	-
Տոկոսների ավելացում	2,762	3,859
Վճարված վարձավճար	(13,332)	(13,332)
Տարվա վերջի դրությամբ	19,772	30,342
Ընթացիկ	11,161	9,939
Ոչ ընթացիկ	8,611	20,403
Տարվա վերջի դրությամբ	19,772	30,342

Ստորև ներկայացված է շահույթում կամ վնասում ճանաչված գումարները.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	8,607	8,606
Տոկոսային ծախսեր կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	2,762	3,859
	11,369	12,465

21 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ		
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	122,267	123,821
	122,267	123,821
Ընթացիկ		
Հետաձգված եկամուտ եկամուտներին վերաբերող շնորհներից	373,696	451,976
	373,696	451,976
	495,963	575,797

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	575,797	378,363
Տարվա ընթացքում ստացված	33,663	384,738
Տարվա ընթացքում ճանաչված	(113,497)	(187,304)
Տարեվերջի մնացորդ	495,963	575,797

22 Ստացված փախառություններ

Հազար դրամ	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր՝ ամորտիզացված արժեքով հաշվարկված				
ՀՀ Ֆինանսների նախարարություն	3,013,788	3,034,282	77,591	85,036
	3,013,788	3,034,282	77,591	85,036

Հազար դրամ	Տրամադրված գումարներ մինչ 2023թ. դեկտեմբերի 31-ը	Մարման ժամկետ	Տոկոսադրույքներ	2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ Ֆինանսների նախարարություն	1,740,568	10.11.2045	0.75%	1,427,407	1,462,353
ՀՀ Ֆինանսների նախարարություն	4,846,628	10.11.2045	0.75%	1,663,972	1,656,965
	6,587,196			3,091,379	3,119,318

23 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	853	309
Ստացված կանխավճարներ	2,289	11,568
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	7,748	5,031
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին հատուցումների գծով	941	840
Այլ	-	300
	11,831	18,047

Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

24 Պահուստներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Պահուստներ շարունակական գործառնական ծախսումների գծով	15,122	-	17,739	-

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	17,739	-	2,617	15,122
	17,739	-	-	15,122

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	15,930	1,809	-	17,739
	15,930	1,809	-	17,739

25 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Հաշվետու ամսաթվից հետո որևէ իրադարձություն չի եղել, որը կարող է հանգեցնել ճշգրտման կամ լրացուցիչ բացահայտման այս ֆինանսական հաշվետվություններում:

26 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

27 Ֆինանսական գործիքներ

27.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Հիմնադրամի ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ֆինանսական գործիքի յուրաքանչյուր տեսակի գծով սպեցիֆիկ տեղեկատվություն
- Ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման գծով տեղեկատվություն, ներառյալ դատողությունները և գնահատումների անորոշությունները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Դրամական միջոցներ	157,136	273,602
- Դեպոզիտներ	498,358	973,092
- Տրված փոխառություններ	2,277,129	1,383,834
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	844,311	1,263,068
	3,776,934	3,893,597

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ՝ ամորտիզացված արժեքով չափվող		
- Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	Տարվա վերջի դրությամբ	30,342
- Ստացված փոխառություններ	3,091,379	3,119,317
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11,831	18,047
	3,103,210	3,167,706

27.2 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի:Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

27.3 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է

Հիմնադրամի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և Եվրոյով:

Արտարժույթով գործարքները՝ արտահայտված հազար ՀՀ դրամով՝

Հոդված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	3,290	677	3,967
Դրամական միջոցներ և համարժեքներ	61,369	14,474	75,843
	64,659	15,151	79,810
Ֆինանսական պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	1,629,168	-	1,629,168
	1,629,412	128,886	1,758,298
Զուտ արդյունք	(1,564,753)	(113,735)	(1,678,488)

Հոդված

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	3,835	444	4,280
Դրամական միջոցներ և համարժեքներ	144,431	47,820	192,250
	148,266	48,264	196,530
Ֆինանսական պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	1,622,160	-	1,622,160
	1,622,397	120,751	1,743,148
Զուտ արդյունք	(1,474,131)	(72,487)	(1,546,618)

Դրամի արժեվորումը ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Շահույթ կամ վնաս	(156,475)	(147,413)	1,515	4,862
	(156,475)	(147,413)	1,515	4,862

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներկրել: Այս ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները		
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	844,311	1,263,068
- Դեպոզիտներ	498,358	973,092
- Տրված փախառություններ	2,277,129	1,383,834
- Դրամական միջոցներ և համարժեքներ	157,136	273,602
	3,776,934	3,893,597

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հմնադրամը ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	11,831	-	11,831
Ավելի քան 5 տարի	19,772	494,627	514,399
	31,603	494,627	526,230
Հաշվեկշռային արժեք	31,603	494,627	526,230

2022թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	18,047	-	18,047
6 ամսից մինչև 1 տարի	-	-	-
1-5 տարի	-	-	-
Ավելի քան 5 տարի	30,342	3,119,317	3,149,659
	48,389	3,119,317	3,167,706
Հաշվեկշռային արժեք	48,389	3,119,317	3,167,706

27.4 Կապիտալ ռիսկի կառավարում

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա) հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր փոխառություններ	3,091,379	3,119,317
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	157,136	273,602
Զուտ պարտավորություն	2,934,243	2,845,715
Ընհանուր կապիտալ	303,438	285,758
	3,237,681	3,131,473
Ֆինանսական լծակ	0.91	0.91

27.5 Ֆիանանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի հիերարխիա

Ֆինանասական հաշվետվությունները կազմելիս Հիմնադրամի որոշ ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով: Հիմնադրամի, ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի չափման համապատասխան գնահատման տեխնիկա:

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	844,311	844,311	-	-
Դեպոզիտներ	498,358	-	498,358	-
Տրված փոխառություններ	2,277,129	-	2,277,129	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	157,136	157,136	-	-
	3,776,934	1,001,447	2,775,487	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	19,772	-	19,772	-
Ստացված փոխառություններ	3,091,379	-	3,091,379	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	11,831	11,831	-	-
Ընդամներ	3,122,982	11,831	3,111,151	-

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,263,068	1,263,068	-	-
Դեպոզիտներ	973,092	-	973,092	-
Տրված փոխառություններ	1,383,834	-	1,383,834	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	273,602	273,602	-	-
	3,893,597	1,536,671	2,356,927	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	30,342	-	30,342	-
Ստացված փոխառություններ	3,119,317	-	3,119,317	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	18,047	18,047	-	-
	3,167,706	18,047	3,149,659	-

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- <u>1-ին մակարդակ</u>՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- <u>2-րդ մակարդակ</u>՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- <u>3-րդ մակարդակ</u>՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ կետերի և ֆինանսական գործիքների, որոնք, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, չափվել են վերագնահատված արժքով կամ

իրական արժեքով, ինչպես ներկայացված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

28 Պայմանականություններ

28.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

28.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

28.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժերառաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

29 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Հիմնադրամի կապակցված կողմ է հանդիսանում իր հիմնադիր մարմինը:

29.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Ստացված փոխառություններ

Հազար դրամ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	Մարում	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ Ֆինանսների նախարարություն	3,119,318	245,925	273,864	3,091,379
	3,119,318	245,925	273,864	3,091,379

Ստացված փոխառություններ

Հազար դրամ	2022թ. հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	Մարում	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ Ֆինանսների նախարարություն	3,557,712	180,168	618,562	3,119,317
	3,557,712	180,168	618,562	3,119,317

30 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	22,018	19,333
	22,018	19,333

31 Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվների փոփոխություն

Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվները իրենից ներկայացնում է Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների տարբերությունը, որն առաջացել է հիմնադիրների կողմից կանոնադրական նպատակների իրականացման համար իրականացված ծախսումների հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական ծախսերի ճանաչումից: Ինչպես նշվել է ծանոթագրություն 2.1-ում ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով բացահայտվող տեղեկատվության օգտակարությունը սույն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար, Հիմնադրամի ղեկավարությունը նպատակահարմար է գտնում ներկայացնել հիմնադրին վերագրելի զուտ ակտիվների շարժը՝

Հազար դրամ	Հիմադրին վերագրելի զուտ ակտիվներ
Մնացորդը առ 01 հունվարի 2022թ.	64,279
Ավելացում	221,480
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	285,758
Ավելացում	17,680
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	303,438

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 09.08.2024 17:08